Արձանագրություն N 1-1

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/15 ծածկագրով ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13.01.2021 թ.
ժամը 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Դ. Շատվերյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Եղիազարյան
Գ. Գևորգյան
Աշ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

1. Սույն գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին

(Դ. Շատվերյան)

1.1 ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման համար կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 12.01.2021թ. ստացվել է հարցում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվող պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահող՝ ---------- Դ. Շատվերյան
Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան
---------- Գ. Գևորգյան
---------- Աշ. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2021 **թվականի հունվարի** 13-**ի թիվ** 1-1 **որոշմամբ և հրապարակվում է**
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-**րդ հոդվածի համաձայն**

Ընթացակարգի ծածկագիրը N **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ**-20/15

12.01.2021թ. ստացված հարցումը և դրա վերաբերյալ պարզաբանումը.

Հարցադրում 1

Խնդրում եմ պարզաբանել՝
Նախահաշվում՝ վիտրաժներ բաժնում, ալյումինե շրջանակով ջերմախնայող ապակեփաթեթով ապակե միջնորմների քանակում ներառված է նաև տրիպլեքս ապակիով միջնորմների ծավալները:
Սակայն նախագծում առանձնացված է՝ ջերմակամուրջով և տրիպլեքս:

Պարզաբանում 1

Նախագծում՝ ալյումինե շրջանակներով միջնորմները առանձնացված են հետևյալ կարգ՝

- Միջնորմներ՝ ալյումինե ջերմակամրջակով շրջանակներով, 4+14+6 ջերմախնայող ապակեփաթեթով
- Միջնորմներ՝ ալյումինե ջերմակամրջակով շրջանակներով, 4+14+6 ջերմախնայող ապակեփաթեթով ԷՄԻՍԻՈՆ ապակի
- Միջնորմնար՝ ալյումինե առանց ջերմակամրջակի շրջանակներով, 8մմ լամինացված տրիպլեքս ապակիով:

Նախահաշվում առանձնացված են միայն ալյումինե շրջանակով ապակե միջոնրմների բացվող և խուլ փողկերով, քանի որ ջերմակամրջակով պրոֆիլներով և ջերմախնայող 4+14+6 ապակեփաթեթով կամ 4+14+6 ԷՄԻՍԻՈՆ ջերմախնայող ապակեփաթեով միջնորմներն արժեքով համապատասխանում են առանց ջերմակամրջակի պրոֆիլներով տրիպլեքս ապակիով միջնորմներին:

Հարցադրում 2

Խնդրում եմ պարզաբանել՝
Սարքեր և սարքավորումների համար հղում է արված կոնկրետ ապրաքային նշանի: Կարո՞ղ է մասնակիցը ներկայացնել համարժեքը:

Պարզաբանում 2

Այո, կարող է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Տաթևիկ Վասիլյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլեկտրոնային փոստ՝ tender2@minurban.am կամ urbanpiu.gnumner7@gmail.com
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով